դրեալ ազգ արար 'ի Դուռն, և ծանոյց միանգամայն՝ թէ Յոյնք յենլով 'ի նոր հրովարտակն՝ արգելին զբրիստոնեայս 'ի Ս. Տեղեաց, զի իւրաքանչիւր ազգ ունի իւր բաժին տեղիս և առանձին վանօրայս՝ հաստատեալ օրինօք։

Բայց յայսմանէ էառ Թէոդորոս նաեւ հանրագիր յայլազգեաց կնքով դատաւորին վասն վանօրէիցն Հայոց, զի Յոյնք զհետ մտեալ էին փոխել զանուանս նոցա, և մուծանել յարձանագրութիւնս դիվանին և 'ի հրովարտակս, որպէս և արարին իսկ կոչելով զՍ. Յակոբ (Մար Եաղուպ) վանք Վրաց, զՍ. Փրկիչ (Հազրէթի Իսանըն զընտանի), և զՍ. Հրեշտակապետ (Ճէնանըն էվի). նոյնպէս և զեկեղեցին Ս. Յովհաննու։ Զի թէպէտ վկայեցին այլազգիք 'ի դրի անդ թէ Յոյնք ստութեամբ եւ խաբէյութեամբ ջանան փոխել զանուանս վանօրէիցն Հայոց, դաւադրութիւն պատրաստեալ առ յապա ժամանակի, սակայն վանօրայքն են սեփհական Հայոց։ Այս գիր ոչ ինչ օգնեաց յայնժամ, այլ արարին Յոյնք որպէս և կամեցան։

Թէոդորոս Պատրիարք հանդերձ 6 խորհրդականօք իւրովք, որք էին գործակալք Աթոռոյն, թախանձանօք գրեաց առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս, և ծանոյց զոր ինչ միանգամ արարին Յոյնք յերուսաղէմ, եւ խնդրեաց հանել նոր հրովարտակ արքունուստ, առ 'ի դարձուցանել յետս զառաջին իրաւունս Հայոց, զորս յափշտակեցին Յոյնք։ Իսկ Յոյնք 'ի դահակալութեան Սուլթան Մուստաֆայի Գ. առաքեցին զմանս նորոգել զհրովարտակսն, որոյ վասն աղաչէր Թէոդորոս զդուշանալ, զի մի մուծանիցեն 'ի նոր հրովարտակս զանուանս վանօրէիցն Հայոց, այլ այս չեղեւ հնար, որպէս գրեցաք։

Ի հասանիլ գրոց դատաւորին 'ի Դուռն, նոյնպէս Պատրիարքին և միաբանաց առ գլխաւորս ազգին, և ապա մի ըստ միոջէ ծանուցին Արքայի զգործս Յունաց, թէ որպէս զրկեցին զՀայս 'ի տեղեաց իւրեանց։ Հրամանաւ Արքայի գրեցաւ նոր հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) համաձայն մնաց առաջին հրովարտակացն, և առաքեցաւ այն յերուսաղէմ 'ի ձեռն ոստիկանի ուրուք, և նորա եկեալ ետ ընթեռնուլ զհրովարտակն 'ի դատարանի, և սկսաւ կարգաւորել զգործս Հայոց, ետ մուծանել զեկեղեցական սպասս Հայոց